

Հետևություն հանուն ապագայի

Հարավային Կովկասը խաչմերուկներում

06 դեկտեմբերի, 2004 թ.

Որոշումներ կայացնելու ժամանակը

Հարավային Կովկասի մարդիկ մոտենում են ընտրության խաչմերուկի:

Խորհրդային միությունից անկախանալուց տասներեք տարի անց Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի (սույն գրության մեջ միացյալ կերպով որպես Հարավային Կովկաս ձեւակերպված) բնակչության գրեթե կեսը դեռեւս ապրում է աղքատության ազգային սահմանագծերից ցած (Համաշխարհային բանկ, 2003):¹ Հիմնական սոցիալական ծառայությունների մատուցումը որոշ շրջաններում փաստացի դադարեցված է, գործազրկության մակարդակը բարձր է մնում, եւ շատերի համար դժվար է նույնիսկ մեկ օրվա աշխատանք գտնելը:

Վերջին տաս տարվա ընթացքում Հարավկովկասյան հսկայական մարդկային եւ բնական ռեսուրսներ են վատնվել՝ ե՛ւ հակամարտությունների, ե՛ւ սոցիալական ծառայությունների փլուզման պատճառով: Չնայած համեմատաբար կայուն տնտեսական աճին, դրա արդյունքներն անարդար կերպով են բաշխվել հարուստ եւ աղքատ մարդկանց միջեւ, ինչը զուգորդվել է լայնատարած կոռուպցիայով եւ իշխանության՝ անկայունության հանգեցնող չարաշահմամբ:

2000 թ. այս երեք երկրները, որ ստորագրել են Միացյալ ազգերի կազմակերպության Հազարամյակի զարգացման նպատակները՝ համաշխարհային աղքատությունը

¹ Աղքատության ազգային սահմանից ցած ապրող բնակչության տոկոսը. Հայաստան՝ 43 տոկոս, Ադրբեջան՝ 50 տոկոս, Վրաստան՝ 55 տոկոս:

նվազեցնելու համար:² Աղքատությունը հաղթահարելու սույն պարտավորվածությունը մի կարելուր հնարավորություն է, որից հարկ է օգտվել՝ բնակչության, քաղաքացիների կյանքը բարելավելու համար: Անհրաժեշտ է զարգացնել հուսալի եւ պատասխանատու հաստատություններ, որոնք բարեփոխման կիանգեցնեն:

Օքսֆամը կոչ է անում ազգային կառավարություններին, միջազգային հանրությանը եւ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ աշխատելու միասին, հանրային ծախսերի վերաբերյալ լավագույն քաղաքականությունների վճիռներ եւ ընտրանք կատարելու՝ աղքատ եւ խոցելի մարդկանց կյանքը բարելավելու նպատակով:

Աղքատությունը Հարավային Կովկասում

Օքսֆամն աշխատել է Հարավային Կովկասում 1993 թվականից ի վեր՝ արձագանքելով թե՛ մարդասիրական եւ թե՛ զարգացման կարիքներին: Այն ժամանակ տարածաշրջանը ներքաշված էր երեք զինյալ հակամարտության մեջ: Աբխազիայում, Հարավային Օսեթիայում եւ Լեռնային Ղարաբաղում: Տաս տարի անց Հարավային Կովկասն ապաստանում է ավելի քան 1.1 միլիոն փախստականների (ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատար, 2002 թ.): Նրանք շարունակաբար ապրում են անորոշության մեջ, քանի դեռ առկա են փակուղային եւ չլուծված քաղաքական հակամարտությունները:

1990-ականների փոթորիկը ոչ միայն տեղահան արեց մարդկային մի լայն զանգված, այլեւ ոչնչացրեց նրանց ապրուստը: Առեւտուրը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ դադարեց, խափանելով երկու երկրների միջեւ եղած բնական կապերը: Տեղական շուկաները ստիպված էին գործել մեկուսացված; միաժամանակ ելքը դեպի միջազգային շուկա սահմանափակ էր մնում: Այս անելանելի վիճակը նվազեցնում էր նաեւ տարածաշրջանի գրավչությունն օտարերկրյա ներդրումների համար: Այժմ էլ պատմականորեն կենսունակ եւ չափազանց անհրաժեշտ առեւտրական կապերը մնում են չիրականացված:

Նախքան տարածաշրջանային հակամարտության սկիզբը, Խորհրդային միության փլուզումը հանգեցրեց զանգվածային գործազրկության եւ այն հաստատությունների վերացմանը, որոնք նախկինում անվճար սոցիալական ծառայություններ են տրամադրել: Միլիոնավոր մարդիկ աղքատացան: Այդ ժամանակներից ի վեր որոշակի խմբեր նաեւ զգալիորեն հարստացան, մինչդեռ այլոք դեռեւս պայքարում են պարզապես կենդանի մնալու համար:

Փոփոխությունները տղամարդկանց եւ կանանց վրա տարբեր կերպ անդրադարձան: Կանայք ավելի ձկուն գտնվեցին այն ընդհանուր սոցիալ-տնտեսական փոփոխությունների նկատմամբ, որոնք ողջ տարածաշրջանում զանգվածային գործազրկություն սփռեցին: Շատ ընտանիքներում կանայք ստանձնեցին վաստակողի դերը (որն ավանդաբար պատկանում է տղամարդուն), զբաղվելով փոքրածավալ արտադրությամբ եւ առեւտրով: Կանայք ավելի հեշտ համակերպվեցին ձգնաժամին, քան տղամարդիկ, որոնք դժվար ընդունեցին այն փաստը, որ իրենք այլեւս վաստակող չեն հանդիսանում: Արդյունքում ընտանեկան

² Աղքատության հաղթահարման միջազգային թիրախներ. ամբողջովին թվարկված են սույն գրության հավելվածում:

լարվածությունը հանգեցրեց վեճերի, իսկ վատթարագույն դեպքերում՝ նաեւ բռնության:

Ի՞նչ է հնարավոր անել

Օքսֆամն ու այլ զարգացման գործակալություններ ականատես են եղել իրավիճակների, երբ աղքատներն իրենք են ունակ եղել վերջ տալու աղքատության «կախարդված շրջանին»: Օրինակ, Օքսֆամի կողմից ֆինանսավորվող առաջնային բուժօգնության ծրագրերը մարդկանց համար մատչելի դարձրին կենսական դեղորայքն ու առաջնային բուժօգնությունն այն վայրերում, ուր նախկինում պետականորեն տրամադրվող առողջապահական ծառայությունները դադարեցված էին: Մոտ 100 հայաստանյան գյուղում այժմ գործում է համայնքահեն առողջապահական սխեման, որը բավարարում է տեղաբնակ գյուղացիների հիմնական պահանջները: Նման սխեմաներն ապացուցել են իրենց արդյունավետությունն ու կիրառելիությունը, սակայն երկրում աղքատ մարդկանց ավելի ստվար զանգվածի օժանդակելու միտման դեպքում դրանք կառավարության աջակցության կարիքը կունենան: Համայնքային նախաձեռնության մյուս օրինակը տարածաշրջանի երեք երկրներում իրականացվող Օքսֆամի միկրովարկերի ծրագրերն են, որոնք վարկեր եւ ուսուցում են առաջարկում՝ օգնելով աղքատ մարդկանց ներգրավվելու փոքր բիզնեսի մեջ: Սույն ծրագրերն, ինչպես նաեւ այլ զարգացման գործակալությունների ծրագրեր, ցույց են տվել, որ աջակցության դեպքում աղքատները կարող են լինել ստեղծագործ, արդյունավետ եւ հաջողակ՝ ձեռներեցի իրենց գործունեության մեջ:

Երկու օրինակն էլ ցույց է տալիս, որ դրական փոփոխությունը հնարավոր է: Առաջին դեպքում աղքատ մարդիկ օգտվել են մատչելի առաջնային առողջապահությունից, մինչդեռ երկրորդում նրանք վարկ եւ ունակություններ զարգացնող ուսուցում են ստացել՝ հետագայում ապրուստի վաստակ ունենալու համար: Բոլոր դեպքերում, երկու օրինակն էլ փաստում է, որ նման հաջող նախաձեռնությունների ազդեցությունը սահմանափակ է լինելու մինչ այն ժամանակը, երբ ազգային կառավարությունները կաջակցեն հաշվետու եւ թափանցիկ հաստատությունների ստեղծմանը՝ երաշխավորելով, որ մարդկանց առավել լայն զանգվածներ կօգտվեն դրանցից:

Օքսֆամը խրախուսել է տեղական համայնքների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, կառավարության եւ դոնոր գործակալությունների միջեւ համագործակցությունը՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրերի եւ բյուջեի մոնիտորինգի մշակման աշխատանքի միջոցով: Մենք հավատացած ենք, որ նման գործընկերությունը վճռորոշ է այն հաստատությունների ստեղծման գործում, որոնք եւ պիտի տանեն մեզ դեպի անհրաժեշտ բարեփոխումները:

Այժմ գործելու ժամանակն է

Օքսֆամը հավատացած է, որ տարածաշրջանում առկա է հզոր պոտենցիալ՝ դրական փոփոխությունների հասնելու համար: Մենք ցանկանում ենք տեսնել առկա միջոցները որպես հիմք՝ բարեկեցիկ ապագայի կառուցման գործընթացում: Երեք երկրների պատրաստակամությունն՝ առավելագույնս Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելու համար հուսադրում է Հարավային Կովկասում աղքատության մեջ ապրող մարդկանց: Հաջորդ 10 տարիների ընթացքում երկրների կառավարությունները, դոնոր հանրությունը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է միասին ինտենսիվ աշխատեն համագործակցության նոր ձևեր մշակելու համար՝ այս մարտահրավերին ընդառաջելու նպատակով: Իրենք պետք է փոխհամաձայնության գան աղքատության պատճառների շուրջ, ինչպես նաև այն խոչընդոտների, որոնք պետք է հաղթահարվեն, որպեսզի այս հարուստ տարածաշրջանի բարեկեցությունը հնարավոր լինի արդարացի բաշխել բոլորի միջև: Որպես նախապայման՝ Աբխազիայում, Հարավային Օսեթիայում և Լեռնային Ղարաբաղում ընթացող դեստրուկտիվ հակամարտությունների շուրջ անհրաժեշտ է լուծումներ գտնել:

Հարավային Կովկասում 10 տարվա ընթացքում ձեռք բերված աշխատանքային փորձը Օքսֆամին սովորեցրեց, որ տարածաշրջանում աղքատության նվազեցումը և Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելը կախված է հետևյալ հատուկ պայմաններից.

- Նոր տնտեսական հնարավորություններ աղքատ մարդկանց համար՝ այն երաշխիքներով, որ բարեկեցությունը չկենտրոնանա միայն որոշ մարդկանց ձեռքերում;
- Հիմնական և մատչելի ծառայությունների (մասնավորապես առողջապահական) հասանելիության ապահովումն աղքատ մարդկանց համար;
- Բարեփոխումներն ուղղորդող լավ կառավարում և հաշվետու ու թափանցիկ ինստիտուցիոնալ կառույցներ՝ ի նպաստ աղքատ մարդկանց կյանքի բարելավմանը:

Այս ամենին պետք է հասնել՝ ձևավորելով բարգավաճող և ապահով տարածաշրջանի տեսլական, որը պետք է դառնա իրականություն Հարավային Կովկասի միլիոնավոր աղքատ մարդկանց համար:

Հավելված

Ո՞րոնք են Հազարամյակի զարգացման նպատակները

Միջազգային կոնֆերանսների և համաշխարհային սամիտների ընթացքում ստանձնած պարտավորվածությունները 1990-ականների ընթացքում ամփոփվեցին աշխարհի առաջնորդների կողմից 2000 թ. սեպտեմբերին վավերացված Հազարամյակի հռչակագրում: Ելնելով այդ հռչակագրից, Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիրը (ՄԱԶԾ) աշխատեց ՄԱԿ-ի այլ ստորաբաժանումների, հիմնադրամների և ծրագրերի հետ, ինչպես նաև Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հետ, և արդյունքում ձևավորվեց նպատակների համառոտ մի ցանկ, թվային թիրախներ և հաշվարկելի ցուցանիշներ՝ աշխարհում աղքատությունը նվազեցնելու գործընթացում առաջընթացը գնահատելու համար: Նոր շարադրությամբ այն հայտնի է որպես «Հազարամյակի զարգացման նպատակներ», որը ներառում է 8 նպատակ, 18 թիրախ, և ավելի քան 40 ցուցանիշ: ՄԱԿ-ի Գերագույն համագումարն ընդունեց այն որպես Գերագույն քարտուղարության «Հազարամյակի ճանապարհային քարտեզի» մի մաս:

Մինչ 2015 թ. նախանշված Հազարամյակի զարգացման նպատակները ներառում են.

- կրկնակի անգամ կրճատել ծայրահեղ աղքատությունը և սովը
- հասնել համատարած առաջնային կրթությանը
- խթանել գենդերային հավասարությունը
- նվազեցնել մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը երկու երրորդով
- նվազեցնել մայրական մահացությունը երեք քարորդով
- կասեցնել ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ի, մալարիայի և տուբերկուլյոզի տարածումը
- ապահովել շրջակա միջավայրի կայունությունը
- զարգացնել զլոբալ համագործակցությունը հանուն զարգացման, թիրախելի օգնությունը, առևտուրը և պարտքերի մարումը

(Աղբյուր՝ ՄԱԶԾ)

Լրացուցիչ տեղեկատվություն ՀԶՆ մասին կարելի է գտնել հետևյալ հասցեներով.

www.oxfam.org.uk/what_you_can_do/campaign/mdg/index.htm

www.un.org/millenniumgoals

www.meetingthemdgs.org

www.makepovertyhistory.org/home.html

Հղումներ.

ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատար (2002)

“UNHCR Statistical Yearbook”, հրապարակված 2004 թ. հոկտեմբերի 07-ին:

www.unhcr.ch/cgi-bin/texis/vtx/statistics/opendoc.pdf

Համաշխարհային բանկ (2003)

“Country at a Glance Tables”, հրապարակված 2004 թ. հոկտեմբերի 07-ին:

www.worldbank.org/data/countrydata/countrydata.html